ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/157

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ դատական դեպարտամենտ
Մասնակից՝ «Հազարաշեն» Ա/Կ

Մասնակցությամբ՝
«Հազարաշեն» Ա/Կ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9634-2021 գրությամբ «Հազարաշեն» Ա/Կ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 08.06.2021թ.-ի թիվ ԴԴ/95-21 գրության հիման վրա, 15.06.2021թ.-ին «Հազարաշեն» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 15.06.2021թ.-ին:

16.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2021/157 համարի ծածկագիրը:

24.06.2021թ.-ին, 02.07.2021թ.-ին, 09.07.2021թ.-ին և 15.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.07.2021թ.-ին:

2. ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ դատական դեպարտամենտը 08.06.2021թ.-ի թիվ ԴԴ/95-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Հազարաշեն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա 2020 թվականի մարտի 12-ին կնքվել է ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N10 ավագ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/4 գնման պայմանագիրը (այսուհետ՝

Պայմանագիր): Վերջինս ուժի մեջ է մտել ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի N709-Ն որոշման հիման վրա 2020 թվականի հունիսի 12-ին կնքված N1 համաձայնագրով:

ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 25-ի N397-Ն որոշմամբ նշված ծրագրի 2020 թվականին չիրացված գումարի չափով նախատեսվել է ֆինանսական միջոց:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 7.13 կետի պահանջների՝ Պատվիրատուն 2021 թվականի ապրիլի 2-ին սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2021 թվականի ապրիլի 23-ը ներառյալ) համաձայնագրի միակողմանի հաստատված օրինակները, որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի ձևով (այսուհետ՝ ապահովում) ներկայացնելու մասին (2020 թվականին ներկայացված ապահովումների ժամկետները լրացել են 2020 թվականի նոյեմբերի 13-ին): Ընկերության կողմից ներկայացվել է միայն միակողմանի հաստատված համաձայնագիրը:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 7.13 կետի պահանջները խախտելու հիմքով Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2021 թվականի ապրիլի 26-ից միակողմանի լուծել է: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2021 թվականի ապրիլի 29-ին տեղադրվել է www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերության տվյալները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հազարաշեն» Ա/Կ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Հազարաշեն» Ա/Կ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 16.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Հազարաշեն» Ա/Կ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.06.2021թ.-ի թիվ

26/26-1/9634-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով նաև գրավոր դիրքորոշում:

«Հազարաշեն» Ա/Կ-ն 29.06.2021թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի վարույթում նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/157 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Դատական դեպարտամենտի կարիքների համար հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Օ. Աբգարյանը և Վ.Պողոսյանը հանդիսանում են «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի բաժնետերեր:

«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի նախագանի է հանդիսացել Օ. Աբգարյանը:

Մասնակցի հայտի տակ որպես «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի նախագահ նշվել է Օ. Աբգարյան, սակայն հայտը էլեկտրոնային ստորագրվել է Վաղարշակ Պողոսյանի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության՝

2.2 կետի համաձայն՝ «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը հաստատված են այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ: «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ հիշյալ անձին վերոնշյալ փաստաթղթերի հաստատման լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթղթի (լիազորագրի):

3.7 կետի համաձայն՝ «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված Ծավալաթերթ-նախահաշիվների /Հավելված 2.1/, որոնցում.

- «Միավորի արժեքը» և «Ընդհանուր արժեքը» սյուներում նշված են նաև /ՀՀ դրամ/ բառերը, այն դեպքում, երբ Ընկերության կողմից Ծավալաթերթ-նախահաշիվները ներկայացվել են «հազար դրամ» հաշվարկային ձևով,

- հիշյալ Ծավալաթերթ-նախահաշիվներում բացակայում են հրավերով նախատեսված «Չնախատեսված ծախսեր 3%» տողերը: Միաժամանակ հանձնաժողովն արձանագրեց, որ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված Ծավալաթերթ-նախահաշիվներում /հավելված 2.1/ շահույթ նախատեսված չէ:

Գնահատող հանձնաժողովի կողմից «ՀԱՋԱՐԱՇԵՆ» ԱԿ-ին 01.06.2021թ. ուղարկվել է անհամապատասխանությունների վերաբերյալ հետևյալ ծանուցումը՝

-«ՀԱՋԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված են այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն հայտում առկա չէ հիշյալ անձին վերոնշյալ փաստաթղթերի հաստատման լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը (լիազորագիրը),

-1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված Ծավալաթերթ-նախահաշիվների /Հավելված 2.1/, որոնցում.

- *«Միավորի արժեքը» և «Ընդհանուր արժեքը» սյուներում նշված են նաև /ՀՀ դրամ/ բառերը, այն դեպքում, երբ Ընկերության կողմից Ծավալաթերթ-նախահաշիվները ներկայացվել են «հազար դրամ» հաշվարկային ձևով,*
- *հիշյալ Ծավալաթերթ-նախահաշիվներում բացակայում են հրավերով նախատեսված «Չնախատեսված ծախսեր 3%» տողերը: Միաժամանակ հանձնաժողովն արձանագրեց, որ 1-ին և 2-րդ չափաբաժիններիմասով ներկայացված Ծավալաթերթ-նախահաշիվներում /հավելված 2.1/ շահույթ նախատեսված չէ:*

Արդյունքում Ընկերությանը տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ՀԱՋԱՐԱՇԵՆ» ԱԿ-ին 01.06.2021թ. www.armeps.am համացանցային հայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով տրամադրել է վերջինիս հայտում արձանագրված անհամապատասխանություններին վերաբերող գնահատող հանձնաժողովի 2021թ. հունիսի 1-ի նիստի թիվ 3 արձանագրության պատճենը, ինչպես նաև հիշյալ արձանագրությունում նշված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ գրություն, որով առաջարկվել է մինչև սույն թվականի հունիսի 2-ը ներառյալ շտկել արձանագրված

անհամապատասխանությունները: Միաժամանակ հիշյալ գրությունը նույն օրը նաև ուղարկվել է Դատական դեպարտամենտի ddgnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի հայտում նշված՝ hazarashen@gmail.com էլեկտրոնայինփոստի հասցեին: Սակայն «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները /մասնակցի կողմից չեն ներկայացվել շտկված փաստաթղթեր/:

Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերը նշված արձանագրությամբ մերժել է «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ա) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կոոպերատիվի գործադիր մարմիններն են՝ նրա վարչությունը և (կամ) նախագահը: Նրանք ղեկավարում են կոոպերատիվի ընթացիկ գործունեությունը և հաշվետու են դիտորդ խորհրդին ու կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Ինչպես արդեն նշել ենք, Օ. Աբգարյանը և Վ.Պողոսյանը հանդիսանում են «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի բաժնետերեր:

«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի նախագանհ է հանդիսացել Օ. Աբգարյանը: Միևնույն ժամանակ մասնակցի հայտի տակ որպես «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի նախագահ նշվել է Օ.Աբգարյան, սակայն հայտը էլեկտրոնային ստորագրվել է Վաղարշակ Պողոսյանի կողմից:

Այսպիսով, «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի անունից «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում ներկայացված մասնակցության հայտը ստորագրվել է

Ընկերության աշխատակցի (բաժնետեր հանդիսացող անձի) կողմից, ով առանց ԱԿ նախագահի համաձայնության և առանց համապատասխան լիազորագիր ստանալու՝ որոշել է տվյալ Ընթացակարգին Ընկերության մասնակցության հարցը և իր անունից էլեկտրոնային եղանակով ստորագրելու նշված Ընթացակարգի մասնակցության հայտը: Մինչդեռ, ինչպես նշվել է, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 119-րդ հոդվածի համաձայն՝ ԱԿ-ի ընթացիկ ղեկավարումը, այդ թվում նաև գնման ընթացակարգերին մասնակցելու որոշումը կայացվում է ընկերության ղեկավարի (տվյալ դեպքում նախագահի) կողմից, ինչը տվյալ դեպքում բացակայել է:

Իրականում Ընկերության նախագահը այդ օրերին բացակայել է Երևան քաղաքից և տեղյակ չի եղել Ընկերության բաժնետերերի կողմից կազմված հայտի և այն ներկայացնելու մասին: Ավելին, նշվածի արդյունքում «ՀԱՋԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի նախագահի կողմից «ՀԱՋԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի համապատասխան աշխատակցին տրվել է նկատողություն:

Հենց այդ իսկ պատճառով «ՀԱՋԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի նախագահը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մինչև սահմանված վերջնաժամկետի ավարտը չի ներկայացրել փաստաթղթերը ստորագրելու մասին Վ. Պողոսյանին տրված լիազորագիրը՝ նման լիազորությունը վերջինիս ընդհանրապես վերապահված չլինելու պատճառով:

Տվյալ իրավիճակում մենք գործ ունենք ոչ թե «ՀԱՋԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի կողմից ներկայացված հայտի (ստորագրված ԱԿ-ի նախագահի կողմից), այլ քաղաքացի Վ. Պողոսյանի կողմից լրացված և ներկայացված թղթերի հետ, որոնք չեն կարող համարվել Ընկերության կողմից ներկայացված հայտ, և առավել ևս նման պայմաններում «ՀԱՋԱՐԱՇԵՆ» ԱԿ-ն չէր կրում պարտավություն շտկելու ներկայացված փաստաթղթերը՝ նման փաստաթղթեր (հայտ) պաշտոնապես չներկայացնելու պատճառով:

Նման պայմաններում ստացվում է մի իրավիճակ, որ յուրաքանչյուր քաղաքացի կարող է կամայականորեն լրացնել իր նախընտրած Ընկերության տվյալներով հայտ, ստորագրել այն և մասնակցել Ընթացակարգերի, արդյունքում Ընկերությանը կանգնեցնելով «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառվելու վտանգի առջև:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նույն փաստական հանգամանքներում Երևան քաղաքացի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից քննվել է թիվ ԵԴ/34567/02/19 քաղաքացիական գործը՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանի 22.03.2019 թ. կայացրած թիվ ՍՅ-ԱՄ-2019/44 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ:

2021թ. ապրիլի 29-ին կայացրած վճռով (վճիռը մտել է օրինական ուժի մեջ, կցվում է) Դատարանը բավարարել է «Տրանսնախագիծ» ՓԲ ընկերության հայցը և անվավեր ճանաչել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանի 22.03.2019 թ. կայացրած թիվ ՍՅ-ԱՄ-2019/44 որոշումը:

Վճռի հիմքում Դատարանը դրել է հետևյալ վերլուծությունը.

«Սույն քաղաքացիական գործով ձեռք բերված ողջ ապացույցներով հիմնավորվել է, որ Գ. Մարտիրոսյանը 07.02.2019 թվականին ներկայացրել է հայ «Տրանսնախագիծ»ՓԲԸ-ի անունի այն վավերացրել է էլեկտրոնային ստորագրությամբ և կից չի ներկայացրել վերը հիշատակված իրավական նորմերին համահունչ ձևակերպված հայտ ներկայացնող իրավաբանական անձի տնօրենի ստորագրությամբ լիազորագիր: Հայցվորն իր հայցը հենել է նաև այն փաստական հանգամանքին, որ հայցվորի անունից ստորագրված չի եղել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Ն» ծածկագրով գնանշման հայտ, այլ այն ստորագրված է եղել ընկերության աշխատակցի կողմից, մինչդեռ ընկերության տնօրենը այդ ընթացքում բացակայել է քաղաքից…:

Սա նշանակում է, որ օրենսդիրը փաստաթղթերի փաթեթի շտկման հնարավորությունը վերապահում է մասնակցին, ոչ թե այն ստորագրած անձին, մինչդեռ, ինչպես վերն արդեն դատարանն արձանագրել է, որ տվյալ պարագայում թե գնահատող հանձնաժողովի և թե բողոքներ քննող անձը ձեռքի տակ չեն ունեցել որևէ հիմնավորում, որ «Տրանսպորտային շինարարության նախագծահետազննական ինստիտուտ «Տրանսնախագի»» ՓԲԸ-ն հայտ է ներկայացրել, քանզի, նախ, ընկերությանանունը ճշգրիտ չի ներկայացվել և երկրորդը՝այն ստորագրել է նման լիազորություն չունեցող անձ: Վերը հիշյալ վերլուծության արդյունքում դատարանը եզրակացնում է, որ Կարգի 32-րդ կետով նախատեսված գործողությունները չեն կարող վերագրվել հայտ չներկայացրած իրավաբանական անձին և չեն կարող գործընթացով չներգրավված իրավաբանական անձի համար առաջացնել բացասական հետևանքներ»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Երևան քաղաքացի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/34567/02/19 քաղաքացիական գործով կայացրած և օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ խնդրում ենք «ՀԱՋԱՐԱՇԵՆ» ԱԿ-ի կողմից շտկում չկատարելը չվերագրել փաստացորեն հայտ չներկայացրած ԱԿ-ին:

բ) Բողոքներ քննող անձին նաև խնդրում ենք նկատի ունենալ, որ հիմնավոր չէ նաև տրված շտկումը՝ ծավալաթերթ-նախահաշվի մասով:

Մասնավորապես, գնահատող հանձնաժողովը գտել է, որ.

- «Միավորի արժեքը» և «Ընդհանուր արժեքը» սյուներում նշված են նաև /ՀՀ դրամ/ բառերը, այն դեպքում, երբ Ընկերության կողմից Ծավալաթերթ-նախահաշիվները ներկայացվել են «հազար դրամ» հաշվարկային ձևով – այս առումով գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը շտկումը պահանջել է ոչ իրավաչափ, քանի որ Ծավալաթերթ-նախահաշիվներում պետք է ներկայացվեր միայն արժույթի անվանումը /փվյալ դեպքում ՀՀ դրամը/, ինչը և կատարվել է:

- հիշյալ Ծավալաթերթ-նախահաշիվներում բացակայում են հրավերով նախատեսված «Չնախատեսված ծախսեր 3%» տողերը: Միաժամանակ հանձնաժողովն արձանագրեց, որ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված Ծավալաթերթ-նախահաշիվներում /հավելված 2.1/ շահույթ նախատեսված չէ – այս կապացությամբ հայտնում ենք, որ նշված գումարները արդեն իսկ ներառված էին առաջարկված գնային առաջարկի արժեքի մեջ:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հաշվի առնել նշված փաստերը և «ՀԱՋԱՐԱՇԵՆ» ԱԿ-ին չվերագրել «Գմումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:»:

4. <u>ՍՑ-LO-2021/157 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների աշխատանքների ձեռքբերման նպատակով 18.05.2021թ.-ին հայտարարվել է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հազարաշեն» Ա/Կ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 01.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.2-րդ կետի համաձայն՝ «Հազարաշեն» Ա/Կ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված են այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Մասնակցի կողմից հայտում առկա են հրավերով պահանջվող

փաստաթղթերը՝ բացառությամբ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթղթի:

iv. Արձանագրության 3.7-րդ կետի համաձայն՝ «Հազարաշեն» Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտում՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվում /հավելված 2.1/ առկա են անհամապատասխանություններ…:

v. Արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և ծանուցել վերոնշյալ մասնակցին ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ 02.06.2021թ.-ը ներառյալ շտկել անհամապատասխանությունը:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 01.06.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի hazarashen@gmail.com էլ. փոստի հասցեին ուղարկվել է անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում:

vii. Հանձնաժողովի 03.06.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Հազարաշեն» Ա/Կ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, որոշել է «Հազարաշեն» Ա/Կ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

ix. Armeps.am էլեկտրոնային կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ «Հազարաշեն» Ա/Կ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ը՝ գնանշման հարցման մասնակցելու դիմում հայտարարությունը, Հավելված 2-ը՝ գնային առաջարկը և մնացած փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված է Վ. Փոշոտյանի կողմից, իսկ որպես կազմակերպության նախագահ նշված է Օ. Աբգարյանի անվանումը:

x. Իրավաբանական անձի պետական գրանցման թիվ 01Ա006080 վկայականի 005 ներդիրի համաձայն՝ «Հազարաշեն» Ա/Կ-ի գործադիր մարմնի ղեկավարն, նախագահ է հանդիսանում Օվսաննա Սիսակի Աբգարյանը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.06.2021 թ.-ի թիվ 26/26-1/9634-2021 գրությամբ «Հազարաշեն» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով

նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված

տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող

հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված

անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին: Նոտարական ձև պահանջող գործարքներ կնքելու համար լիազորագիրը պետք է վավերացնի նոտարը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագրի գործողության ժամկետը չի կարող երեք տարուց ավելի լինել: Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում: Լիազորագիրը, որում նշված չէ դրա կատարման տարին, ամիսը և ամսաթիվը, առոչինչ է:

Հրավերի 2-րդ մասի 2.7-րդ կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ հայտը ստորագրելու լիազորությունը հաստատող փաստաթուղթը՝ լիազորագիրը, հանդիսանում է հայտում ներառվող փաստաթուղթ, որը ներկայացվում է

հայտը ստորագրելու պատշաճ լիազորությունը հավաստելու համար: Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցելու դեպքում պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Օրենսգրքի՝ վերը բերված դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, պարզ է դառնում, որ լիազորագրում նշված գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար, ներկայացուցչին պարտավորեցնում է գործել դրանում սահմանված լիազորությունների շրջանակում, և ներկայացվողի անունից գործելու իրավունք է վերապահում այն պահից, երբ ներկայացուցիչը համաձայնվում է ստանալ լիազորագիրը և/կամ գործել դրանում սահմանված լիազորություններին համապատասխան: Ուստի լիազորագրում առկա դրա կատարման տարին, ամիսը և ամսաթիվը ներկայացուցչին լիազորագրում առկա իրավասությունների շրջանակում գործելու հնարավորության ծագման պահն է՝ սկիզբը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների աշխատանքների ձեռքբերման նպատակով 18.05.2021թ.-ին հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.2-րդ կետով արձանագրվել է, որ «Հազարաշեն» Ա/Կ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված են այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Մասնակցի կողմից հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ բացառությամբ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթղթի, իսկ 3.7-րդ կետով արձանագրվել է, որ «Հազարաշեն» Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտում՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվում /հավելված 2.1/ առկա են անհամապատասխանություններ…: Արձանագրության 5-րդ կետով Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և ծանուցել վերոնշյալ մասնակցին ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ 02.06.2021թ.-ը ներառյալ շտկել անհամապատասխանությունը, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 01.06.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի hazarashen@gmail.com էլ. փոստի հասցեին ուղարկվել է անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում: Սակայն Հանձնաժողովի 03.06.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Հազարաշեն» Ա/Կ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Հազարաշեն» Ա/Կ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել: Armeps.am էլեկտրոնային կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ «Հազարաշեն» Ա/Կ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ը՝ գնանշման հարցման մասնակցելու դիմում հայտարարությունը, Հավելված 2-ը՝ գնային առաջարկը և մնացած փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված է Վ. Փոշոտյանի կողմից, իսկ որպես կազմակերպության նախագահ նշված է Օ. Աբգարյանի անվանումը: Իրավաբանական անձի պետական գրանցման թիվ 01Ա006080 վկայականի 005 ներդիրի համաձայն՝ «Հազարաշեն» Ա/Կ-ի գործադիր մարմնի ղեկավարն, նախագահ է հանդիսանում Օվսաննա Սիսակի Աբգարյանը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով «Հազարաշեն» Ա/Կ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ս.

Հովհաննիսյանը, լիազորագրի բացակայության պայմաններում իրավունք չուներ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու իր ներկայացվողի փոխարեն, լիազորագրի բացակայության պայմաններում չէր կարող ծագել լիազորված անձի ստորագրելու, ըստ այդմ՝ իր ներկայացվողին ներկայացնելու իրավասություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ

աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն

տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ այն հանգամանքների հաշվառմամբ, որ

«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Հազարաշեն» Ա/Կ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ը՝ գնանշման հարցման մասնակցելու դիմում հայտարարությունը, Հավելված 2-ը՝ գնային առաջարկը և մնացած այլ փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված է Վ. Փոշոտյանի կողմից, իսկ ապա դրանից հետո Մասնակցի կողմից չի ներկայացվել Օրենսգրքով և Օրենքով սահմանված կարգով Վ. Փոշոտյանի անվամբ տրված լիազորագիր, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «Հազարաշեն» Ա/Կ-ն գնման գործընթացի շրջանակներում չի ստանձնել որևէ պարտավորություն, որի առկայության պայմաններում է միայն հնարավոր փաստել վերջինիս կողմից պարտավորության խախտմամբ կատարած լինելու կամ չկատարելու հանգամանքի առկայության մասին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.06.2021 թ.-ի թիվ 26/26-1/9634-2021 գրությամբ «Հազարաշեն» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/157 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**